Հաստատված է
Իջևան համայնքի ղեկավարի
« 21 » հուլիսի 2025թ-ի **N 895** որոշմամբ

ՀԱՅՏ
ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿԻ

1	**Առաջարկի հեղինակի անուն,ազգանուն /անվանում/**	Ֆլորա Խաչատրյան
2	**Կոնտակտային տվյալներ** /հասցե, հեռախոս, էլ.փոստ/	**ք. *Իջևան, Անկախության 6/4*** ***+374 77 73 33 92*** florkhachatryan@gmail.com
3	**Առաջարկի անվանումը, նկարագրությունը**	**Մանկության գունավոր ճանապարհը** **Առաջարկի նկարագիր** Առաջարկը նպատակ ունի բարեկարգել Իջևան քաղաքի թիվ 1 (Անկախության փողոցը Մայիսյան փողոցին միասնող աստիճաններ) և թիվ 8 (Երևանյան փողոցը Ղարագյոզյան փողոցին միացնող աստիճաններ) մանկապարտեզներ տանող անբարեկարգ աստիճաններով ճանապարհը: Այն ներկայումս մաշված է, որոշ հատվածներում աստիճանները վնասված են կամ բացակայում են, տարածքում աղբ է կուտակված: Նախագծի միջոցով կկատարվի աստիճանասանդուղքերի վերանորոգում և կառուցում, կկատարվի տարածքի մաքրման աշխատանքներ, կտեղադրվեն աղբամաններ, իսկ աստիճանները կզարդարվեն գունեղ ու հետաքրքիր լուծումներով: Այս ամենը կծառայի ոչ միայն մանկապարտեզ հաճախող երեխաներին, այլև համայնքի բնակիչներին՝ ստեղծելով անվտանգ, մաքուր և գեղեցիկ միջավայր:
4	**Հիմնախնդիրը, որի լուծմանն ուղղված է առաջարկը**	**Հիմնախնդրի և կարիքի հիմնավորում** Այսօր Իջևանի թիվ 1 և թիվ 8 մանկապարտեզներ տանող աստիճաններով ճանապարհները գտնվում են անբարեկարգ վիճակում. • Աստիճանների մի մասը վնասված է կամ բացակայում է, ինչը վտանգ է երեխաների և տարեցների համար: • Տարածքը աղբով է լցված, ինչը հակասանիտարական միջավայր է ստեղծում: • Չկա գեղագիտական տեսք. ճանապարհը ոչ միայն անհարմար, այլև հոգեբանորեն անբարենպաստ է

		փոքրիկների ու ծնողների համար: Մինչդեռ այս աստիճաններով ամեն օր անցնում են շուրջ **240 երեխա իրենց ընտանիքների հետ**, ինչպես նաև **համայնքի բնակիչներ, ուսանողներ, տարեցներ և անցորդներ**: Ընդհանուր շահառուների շրջանակը հասնում է **1000+ մարդու**: Այսպիսով, անհրաժեշտ է ոչ միայն վերանորոգել աստիճանները, այլև ստեղծել նորարարական, գունեղ և գրավիչ միջավայր, որը կնպաստի համայնքի բնակիչների հարմարավետ և անվտանգ շարժմանը: --- **Ծրագրի նպատակները** 1. Բարեկարգել և անվտանգ դարձնել մանկապարտեզներին տանող աստիճաններով ճանապարհը: 2. Ստեղծել գեղագիտական ու գունեղ միջավայր, որը կնպաստի երեխաների տրամադրության բարձրացմանը և կրթական տարրեր կբերի առօրյա ճանապարհին: 3. Ապահովել մաքուր և կարգավորված տարածք՝ ձևավորելով պատասխանատու վերաբերմունք ընդհանուր տարածքի հանդեպ: 4. Ներգրավել համայնքի բնակիչներին և ծնողներին բարեկարգման և տարածքի պահպանման գործընթացում:
5	**Առաջարկի իրականացման շնորհիվ ակնկալվող արդյունքները**	**Ակնկալվող արդյունքները** • Կկառուցվի և կբարեկարգվի մանկապարտեզներին տանող աստիճաններով ճանապարհը: • Շուրջ **240 երեխա** և նրանց ընտանիքները, ինչպես նաև **1000+ համայնքի բնակիչներ**, ամեն օր կօգտվեն անվտանգ և հարմարավետ միջավայրից: • Տարածքը կդառնա գունեղ և ներշնչող. աստիճանները կզարդարվեն գունավոր և նորարարական լուծումներով (թվեր, տառեր, գունեղ պատկերներ), որպեսզի երեխաները քայլելիս նաև սովորեն: • Կձևավորվի մաքուր և կարգավորված տարածք՝ բարելավելով քաղաքի ընդհանուր տեսքը: • Ծնողներն ու բնակիչները ավելի վստահ ու հարմարավետ կօգտվեն տարածքից:

6	**Առաջարկի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները**	Նախնական բյուջե 1. **Աշխատանքներ և նյութեր** • Գոյություն ունեցող աստիճանահարթակի բետոնային ծածկի միջին նորոգում մինչև վերջնական տեսք –500 000 ՀՀ դրամ • Բազալտե սալիկների և աստիճանահարթակների կողնակների համար նախատեսված է 4 միլիոն ՀՀ դրամ • Աղբահանության և տարածքի մաքրման ծառայություններ – 220,000 դրամ **2. Հարմարավետություն և միջավայր** • Կանաչապատում (ծաղկամաններ, բույսեր) – 150,000 դրամ • Լուսավորություն – 250,000 դրամ • Ճինարար-2 միլիոն ՀՀ դրամ • Աստիճանասանդուխքներ- 1000 000 ՀՀ դրամ • Վարպետ/բանվորներ- 200 000 ՀՀ դրամ **Ընդհանուր՝ մոտ 8մլն.320 հազար ՀՀ դրամ** * Կարևոր. Ծրագրի բյուջեն ու նախատեսվող աշխատանքները ենթակա են վերանայման՝ բյուջեի սղության պարագայում: